Արձանագրություն N 3
ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 հոկտեմբերի 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գ. Մարտիրոսյանը

անդամներ՝ Մ. Ստեփանյանը, Ռ. Հարությունյանը, Դ. Դալլաքյանը

քարտուղար՝ Ա. Մկրտչյանը

I. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 18.10.2018թ. թիվ 05/586 գրությամբ դիմել է ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնին հայտնելով, որ

1.1 ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի՝ ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության և մոդելավորման համակարգչային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) տեխնիկական բնութագրի առկա է վրիպակ և փաստացի կազմվել է թերի՝ մասնավորապես, բացակայում են հետևյալ տեխնիկական պահանջները.

ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),

բ) ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,

գ) ծրագրի տարեկան թարմացումները,

դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը,

ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),

զ) ծրագրի բանալիների քանակը:

1.2 վերոնշյալ պահանջների բացակայությունը կհանգեցնի Ծրագրի ոչ լիարժեք օգտագործմանը և փորձաքննությունների ոչ պատշաճ կատարմանը.

1.3 ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 19.10.2018թ. ստացել է ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի թիվ 224-Ա կարգադրությունը 2018 թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարված՝ սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման համար ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովի որոշումը

(Գ. Մարտիրոսյան)

2. Հիմք ընդունելով վերոգրյալը, գնահատող հանձանաժողովը որոշեց ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մարտիրոսյան

անդամներ՝ _____ Մ. Ստեփանյան

_____ Ռ. Հարությունյան

_____ Դ. Դալլաքյան

քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան